

լու համար՝ մի քանի տներ միմեանց կցել, եւ մենք չունինք իրաւունք՝ նոցա բաժանել՝ աւելի մեծ գլխահարկ ստանալու համար: Գուք մեզ էք նւիրելու ձեր մտերմութիւնն եւ ոյժը Աստուծոյ եւ նորա մարգարէի թշնամիների դէմ, քանի դուք կարող էք: Գուք պարտաւոր էք հիւրընկալել գիշերը կարիք ունեցող մուսլիմին, հիւրասիրելով նորան այն կերակրից, որ մեզանում քրիստոնեայք եւ հրէաներ օրինաւոր կը համարեն: Իսկ եթէ ուղղափառներից մէկը ստիպւած լինի ծանապարհին ձեզ մօտ իջեւանելու, այն ժամանակ դուք պարտաւոր էք նորան տանել մօտակայ մուսլիմների մօտ, բացի այն դէպքից, եթէ ձեզ հնարաւոր չլինի նոցա մօտ հասանել: Եթէ դուք (մեր կրօնին) դառնաք եւ աղօթք կատարէք՝ դուք մեր եղբայրներն էք կրօնի մէջ, ապա թէ ոչ՝ ձեր վերայ կը ծանրանայ գլխահարկ: Եւ եթէ մուսլիմներին որ եւ է գործ ստիպելու լինի ձեզանից հեռանալ եւ ձեր թշնամիք ձեզ նեղեն, այս դէպքում մուսլիմները պատասխանատու չեն, եւ այս պայմանն չէ հակասում ձեր դաշնադրութեանն<sup>1</sup>: Ահաւասիկ ձեր իրաւունքը եւ ձեր պարտաւորութիւնները, (որոց) վկայ է Աստուած եւ նորա հրեշտակները եւ բաւական է Աստուած իբրեւ վկայ<sup>2</sup>:

Սորա պատճէն գրեց Տփղիսի բնակիչներին Ջարրահ Ի. Աբգալահ ալ-Հակամի՝

1 Ոչ թի՛ն պայմանն ամբողջ դաշնագրութեան զօրութիւնն կը խախտէ:

2 Պէտք է զարմանալ արաբացի զօրապետի հմտութեանն, որով նա նախապէս տպահոյժում է մահապալան գաղթականների կրօնը եւ կեանքը հեռաւոր երկրում: Ընդգեռ. Գուրին բնակիչներից նա պահանջում է գլխահարկ եւ առարք ի նշան լիովին հպատակութեան, իւր իշխանութիւնն ծայրագոյն հիստիսում տպահոյժելու համար նա բարձր կը գնահատէ՝ գրաւել լեռնաբնակ ժողովրդի «մտերմութիւնն եւ ոյժը» իսլամի թշնամիների դէմ, բաւականաւորով միայն «չնչին գլխահարկով»: